

ՄԵԽԱԿԻ ՄԻԿՐՈԿԼՈՆԱՅԻՆ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ

ԱՌրոկենսատեխնոլոգիայի օխտական կենտրոն, Էջմիածին, ԳԳ

Կենսատեխնոլոգիական մեթոդների կիրառմամբ մշակվել է մեխակի առողջացված տնկանյութի բազմացման արդյունավետ տեխնոլոգիա: Դետազոտման օբյեկտ է հանդիսացել մեխակի (*Dianthus caryophyllus* L.) Ջագոր սորտը: Մեխակի մայր բույսերի համար թերմոթերապիայի օպտիմալ ժամանակահատված է համարվել 30-32 օրը: Արդյունավետ է մերիսթեմատիկ կոնից և մեկ զույգ սաղմնային տերևներից կազմված էքսպլանտը՝ 0,08-0,15մմ մեծությամբ: Էքսպլանտի ախտահանման օպտիմալ տարբերակ է ընտրվել 70% էթիլ սպիրտի (3րոպե) և կալցիումի հիպոքլորիդի 2% լուծույթի (5րոպե) ազդեցության համատեղումը, որի դեպքում պաթոգեններից զերծ, կենսունակ էքսպլանտի քանակությունը կազմել է 94%: Ռեզեներացիայի համար որպես օպտիմալ տարբերակ առանձնակվել է ՄՍ-ի (Մուրաշիզե Սկուզ) մեր կողմից կատարված մոդիֆիկացիան: Մոդիֆիկացիան կատարվել է ի հաշիվ սննդային միջավայրում լրացուցիչ նատրիումի միտրատի ավելացման (110մգ/լ), ամոնիումի և կալիումի միտրատների պակասեցման, որոնք հասցվել են համապատասխանաբար, 180մգ/լ և 630մգ/լ: Միջավայրին ավելացվել է 3,0մգ/լ գլիցին, 100մգ/լ ինոզիտոլ, 1,0մգ/լ թիամին, 2,0մգ/լ միկոտինաթթու: Էկզոգեն ֆիտոհորմոններից ավելացվել է 0,8մգ/լ ԳԹ, 0,4մգ/լ ՆԲԹ, 1,0մգ/լ կինետին:

Մեխակի ռեզեներացիայի և միկրոբազմացման համար լավագույն պայմաններ են համարվել՝ 3000-4000յուրքս լուսավորվածությունը, 23-25°C ջերմությունը, 70-80% խոնավությունը, 16 ժամային լուսապարբերականությունը:

Մեխակի միկրոկտրոնների աճը և զարգացումը կախված է այն հանգամանքից, թե այն կտրոնավորվող բուսակի (*in vitro*) որ մասից է անջատված: Պարզվել է, որ բուսակի հիմքին մոտ գտնվող հանգույցից առաջացած դուստր բույսերը հիմնականում որակյալ չեն, ունեն հանգույցների քիչ քանակ, իսկ II և III հանգույցից առաջացած բույսերի մոտ նկատվել է առավել արդյունավետ աճ և զարգացում: Բազմացման գործակիցը մեկ կտրոնավորման դեպքում կազմել է 1:4: Պարզվել է, որ մեխակի *in vitro* բուսակները նպատակահարմար է ադապտացնել 4-5 զույգ տերև փուլում:

Մշակած տեխնոլոգիան բացառում է հիվանդությունների առկայությունը մեխակի տնկանյութում և ապահովում բույսերի բազմացման բարձր գործակից: Տեխնոլոգիայի կիրառումը հնարավորություն կընձեռի կազմակերպել մեխակի վիրուսազերծ տնկանյութի մասսայական բազմացումը:

Melyan G.H., Sahakyan A.D. Danyan K.S.

MICROCLONAL PROPOGATION OF CARNATION

Scientific Center of Agrobiotechnology, Echmiadzin, RA

Summary

The object of our study was a carnation variety Zagor. The high effective technology of clonal micro propagation of carnation was developed.